# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<ԾՔ-ՇՀԾՁԲ-15/3-17/2-1>>

ք.Ծաղկաձոր <<30>>մարտի 2017թ.

<<Ծաղկաձորի համայնքապետարանը>>, ի դեմս համայնքի ղեկավար Ա.Հարությունյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետև` Պատվիրատու), մի կողմից, և <<Մ-Բի-Ռ>> ՍՊ ընկերությունը, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Բաղդասարյանի (այսուհետև` Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների կապիտալ վերանորոգման՝ տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 4255000 (չորս միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30 դեկտեմբերի 2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Ծաղկաձորի համայնքապետարան
Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՎՀՀ 03001885
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900122002141
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

---------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<Մ-Բի-Ո>>ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Մյասնիկյան 22/4
<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08417829
ՀՀ 220083335012000
Տնօրեն Կ.Բաղդասարյան

---------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 1*
*<<30>>մարտի 2017թ. Կնքված*
*N ԾՔ-ՇՀԾՁԲ-15/3-17/2-1 ծածկագրով գնման պայմանագրի*

## ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

### Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 100 | 500 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 100 | 100 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 100 | 100 |
| 4 | Արտացման համակարգի ստուգում | 100 | 100 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 100 | 100 |
| 6 | ΦS-ի աշխատանքի ստուգում | 100 | 100 |
| 7 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | - | 100 |
| 8 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | 100 | 100 |
| 9 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | - | 100 |
| 10 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 100 | 100 |
| 11 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 100 | 100 |
| 12 | ABS համակարգի ստուգում | 100 | - |
| 13 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 100 | 100 |
| 14 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 100 | 100 |
| 15 | Թափքի վիճակի ստուգում | 100 | 100 |
| 16 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 100 | 100 |
| | **SU-2 ներառվող ծառայությունների անվանում** | | |
| | **1. Շարժիչ** | | |
| 17 | Շարժիչի հանում և տեղադրում | 20 000 | 10 000 |
| 18 | Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում | 100 | 100 |
| 19 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | - |
| 20 | Շարժիչի վերանորոգում | 35 000 | 10 000 |
| 21 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 |
| 22 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 8 000 | 2 000 |
| 23 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 8 000 | 2 000 |
| 24 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 25 000 | 10 000 |
| 25 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | 10 000 | 7 000 |
| 26 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 25 000 | 10 000 |
| 27 | Փականի խցուկի փոխարինում | 3 000 | 1 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 28 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 10 000 | 5 000 |
| 29 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 |
| 30 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | 13 000 | 100 |
| 31 | Հրիչների փոխարինում SOHC | 10 000 | 5 000 |
| 32 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 |
| 33 | Ատամնավոր փոկի փոխարինում | 25 000 | - |
| 34 | Նույնը DOHC դեպքում | 100 | - |
| 35 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 16 000 | 3 000 |
| 36 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | - |
| 37 | Նույնը DOHC դեպքում | 100 | - |
| 38 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | - |
| 39 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 20 000 | 2 000 |
| 40 | Մխոցային օղակների փոխարինում | 25 000 | 10 000 |
| 41 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 |
| 42 | Թափանիվի հանում և տեղադրում | 3 000 | 1 000 |
| | 2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | |
| 43 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 2 000 | 2 000 |
| 44 | Յուղի պոմպի փոխարինում | 1 000 | 1 000 |
| 45 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 |
| 46 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 3 000 | - |
| 47 | Բռնկման կարգավորում | 1 000 | 1 000 |
| 48 | CO կարգավորում | 1 000 | 1 000 |
| 49 | խարնարակի հանում և տեղադրում | 100 | 100 |
| 50 | Խարնարակի վերանորոգում | 100 | 100 |
| 51 | Օդի զտիչի փոխարինում | 1 000 | 1 000 |
| 52 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 5 000 | - |
| 53 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 16 000 | - |
| 54 | Բենզամղիչի փոխարինում | 8 000 | 2 000 |
| 55 | Վառելիքի զտիչի փոխարինում | 3 000 | 1 000 |
| 56 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | 1 000 | 500 |
| 57 | Տրամլյորի հանում և տեղադրում | - | 500 |
| 58 | Տրամլյորի վերանորոգում | - | 500 |
| | 3. Սառեցման և արտածման համակարգ | | |
| 59 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 500 | 500 |
| 60 | Հովհարի հանում և տեղադրում | 500 | 500 |
| 61 | Ռադիատորի հանում և տեղադրում | 8 000 | 4 000 |
| 62 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | - |
| 63 | Ռադիատորի վերանորոգում | 15 000 | 6 000 |
| 64 | Թերմոստատի փոխարինում | 6 000 | 3 000 |
| 65 | Ջրի պոմպի փոխարինում | 18 | 6 |

| | | | |
|---|---|---|---|
| | | 000 | 000 |
| 66 | Նույնը DOHC և V-6 դեպքում | 100 | - |
| 67 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | - |
| 68 | Ջրի պոմպի վերանորոգում | 100 | 100 |
| 69 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 |
| 70 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | - |
| 71 | Ընդարձակող բաքի փոխարինում | 2 000 | 1 000 |
| 72 | Խլարարի հանում և տեղադրում | 10 000 | 3 000 |
| 73 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 |
| 74 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2 000 | 1 000 |
| | 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ | | |
| 75 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | - | 1 000 |
| 76 | Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում | - | 1 000 |
| 77 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | - | 15 000 |
| 78 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | - | 1 000 |
| 79 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում | - | 100 |
| 80 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 100 | 10 000 |
| 81 | ՓՏ-ի վերանորոգում | 100 | 15 000 |
| 82 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 100 | 1 000 |
| 83 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 100 | 1 000 |
| 84 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում | 100 | 500 |
| | 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | |
| 85 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | 100 | 100 |
| 86 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով | 100 | 100 |
| 87 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | 100 | 100 |
| 88 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | - | 2 000 |
| 89 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ. | - | 3 000 |
| 90 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | - | 2 000 |
| 91 | Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում | - | 3 000 |
| | 6. Առջևի և հետևի կամրջակներ | | |
| 92 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | - | 1 000 |
| 93 | Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում | - | 1 000 |
| 94 | Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում | - | 12 000 |
| 95 | Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր. | - | 4 000 |
| 96 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | - | 3 000 |
| | 7. Կախոց | | |
| 97 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 1 000 | 1 000 |
| 98 | Տրավերսի հանում և տեղադրում | 100 | 100 |
| 99 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 6 000 | 2 000 |
| 100 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10 000 | 3 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 101 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | - | 100 |
| 102 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 100 | 100 |
| 103 | Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում | 6 000 | 100 |
| 104 | Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 6 000 | 100 |
| 105 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 5 000 | 100 |
| 106 | Զսպանակի հանում և տեղադրում | 500 | 500 |
| 107 | Զսպանակի վռանների փոխարինում | 500 | 500 |
| 108 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 7 000 | 2 500 |
| 109 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 7 000 | 3 000 |
| 110 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 9 000 | 2 000 |
| 111 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 9 000 | 2 000 |
| 112 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 1 000 | 2 000 |
| 113 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 1 000 | 2 000 |
| 114 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 15 000 | 3 000 |
| 115 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 18 000 | 2 000 |
| 116 | Գնդե հողակապերի փոխարինում | 5 000 | 2 000 |
| 117 | Ծայրակալների հանում և տեղադրում | 6 000 | 2 000 |
| 118 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 7 000 | 3 000 |
| 119 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 10 000 | 2 000 |
| 120 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 3 000 | 1 000 |
| 121 | Հետևի զսպանակի փոխարինում | 1 000 | 500 |
| 122 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 7 000 | 2 500 |
| 123 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | 500 | 500 |
| 124 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 12 000 | 1 000 |
| 125 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 5 000 | 2 000 |
| 126 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 3 000 | 500 |
| 127 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | 4 000 | 500 |
| 128 | Անվաբացքի կարգավորում | 5 000 | 5 000 |
| 129 | Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար | 500 | 500 |
| | 8. Ղեկային մեխանիզմ | | |
| 131 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | - | 5 000 |
| 132 | Ղեկային կալունի վերանորոգում | - | 3 000 |
| 133 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | - | 1 000 |
| 134 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում | - | 100 |
| 135 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 15 000 | 100 |
| 136 | Նույնը DOHC դեպքում | 100 | - |
| 137 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 6 000 | - |
| 138 | Նույնը DOHC դեպքում | 100 | - |
| 139 | Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում | 10 000 | - |

| | | | |
|---|---|---|---|
| 140 | Նույնը DOHC դեպքում | 100 | - |
| 141 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | - |
| 142 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 100 | - |
| 143 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 100 | - |
| | 9. Արգելակային համակարգ | | |
| 144 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | 2 000 | 1 000 |
| 145 | Գլխ. գլանի վերանորոգում | 2 000 | 1 000 |
| 146 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 13 000 | 1 000 |
| 147 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 2 000 | 1 000 |
| 148 | Բանվ. գլանի վերանորոգում | 1 000 | 1 000 |
| 149 | Արգելակային համակարգի օդահանում | 1 000 | 1 000 |
| 150 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 500 | 500 |
| 151 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 500 | 500 |
| 152 | Արգելակային փողրակի փոխարինում | 4 000 | 2 000 |
| 153 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 4 000 | 3 000 |
| 154 | Հետևի կոճղակների փոխարինում | 4 000 | 3 000 |
| 155 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 4 000 | 2 000 |
| 156 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 5 000 | - |
| 157 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 |
| 158 | ABS-ի հանում և տեղադրում | 2 000 | - |
| 159 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 2 000 | 2 000 |
| 160 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում | 1 000 | 1 000 |
| | 10. Էլեկտրասարքավորում | | |
| 161 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 25 000 | 15 000 |
| 162 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 500 | 500 |
| 163 | Գեներատորի հանում և տեղադրում | 8 000 | 2 000 |
| 164 | Նույնը հիդրոուժեղարարի դեպքում | 100 | - |
| 165 | Գեներատորի վերանորոգում | 20 000 | 5 000 |
| 166 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 10 000 | 2 000 |
| 167 | Մեկնարկիչի վերանորոգում | 20 000 | 5 000 |
| 168 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 |
| 169 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 |
| 170 | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում | 10 000 | 2 000 |
| 171 | Վազքաչափի հանում և տեղադրում | 500 | 100 |
| 172 | Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում | 500 | 100 |
| 173 | Սաքերի պանելի հանում և տեղադրում | 500 | 100 |
| 174 | Արագաչափի հանում և տեղադրում | 1 000 | 500 |
| 175 | Ազդանշանի հանում և տեղադրում | 3 000 | 1 000 |
| 176 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | 4 000 | 5 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 177 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | 7 000 | - |
| 178 | Ազդանշանային համակարգի տեղադրում | 15 000 | 12 000 |
| 179 | Մագնիտոլայի տեղադրում | 500 | 500 |
| 180 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 3 000 | 1 000 |
| 181 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 10 000 | 1 000 |
| 182 | Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում | 15 000 | 10 000 |
| 183 | Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում | 10 000 | 5 000 |
| 184 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 500 | 500 |
| 185 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 600 | 600 |
| 186 | Վառոցքի մոմերի փոխարինում | 10 000 | 2 000 |
| 187 | Կոնդիցիոների լիցքավորում | 20 000 | - |
| 188 | Կոնդիցիոների վերանորոգում | 15 000 | - |
| | **11. Այլ ծառայություններ** | | |
| 189 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում | 4 000 | 3 000 |
| 190 | Ավտոմեքենայի լվացում | 2 000 | 2 000 |
| 191 | Անիվի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 |
| 192 | Անվադողի վերանորոգում | 1 500 | 1 500 |
| 193 | Անիվի բալանսավորում | 1 000 | 1 000 |
| 194 | Անիվի վալց | 1 000 | 1 000 |
| 195 | CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար | 800 | 800 |
| 196 | Խառատային աշխատանքներ | 1 000 | 1 000 |
| 197 | Փականագործի աշխատանքներ | 1 000 | 1 000 |
| 198 | Քարշակի ծառայություն գին 1կմ, համար | 1 000 | 1 000 |
| | **Ընդամենը ծառայություններ** | **842 000** | **359 000** |
| | **SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | **Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների** | |
| | | **1 չափաբաժին** | **3 չափաբաժին** |
| | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | **Տոյոտա քեմրի, 2008թ** | **Վազ 2106, 2004թ.** |
| | **1. Շարժիչ** | | |
| 1 | Շարժիչի բլոկ | 30 000 | 15 000 |
| 2 | Շարժիչի գլխիկ | 20 000 | 5 000 |
| 3 | Բարձիկ | 40 000 | 2 000 |
| 4 | Շարժիչի գլխիկի միջադիր | 25 000 | 2 500 |
| 5 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | 5 000 | 100 |
| 6 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 1 000 | 1 000 |
| 7 | Շարժիչի փական դուրս մղող | 7 000 | 3 000 |
| 8 | Շարժիչի փական ներս մղող | 7 000 | 3 000 |
| 9 | Շարժիչի փականի խցուկ | 2 000 | 300 |
| 10 | Ծնկաձև լիսեռ | 1 000 | 1 000 |
| 11 | Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի | 10 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | 000 | 000 |
| 12 | Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի | 15 000 | 1 000 |
| 13 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 30 000 | 3 000 |
| 14 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 45 000 | 3 000 |
| 15 | Հենակային տափողակ | 15 000 | 250 |
| 16 | Մխոց | 20 000 | 4 000 |
| 17 | Մխոցային օղակներ | 70 000 | 12 000 |
| 18 | Ատամնանիվ | 1 000 | 1 000 |
| 19 | Ատամնավոր փոկ | 25 000 | 100 |
| 20 | Շղթա | 30 000 | 6 000 |
| 21 | Հիդրոծգան | 25 000 | 100 |
| 22 | Հրիչ | 8 000 | 1 000 |
| 23 | Հիդրոհրիչ | 15 000 | 100 |
| 24 | Բաշխակ | 1 000 | 3 000 |
| 25 | Հանգստարար | 15 000 | 2 000 |
| 26 | Թափանիվ | 500 | 500 |
| 27 | Թափանիվի պսակ | 500 | 500 |
| 28 | Խցուկ բաշխիչ լիսեռի | 7 000 | 100 |
| 29 | Շկիվ | 500 | 500 |
| 30 | Շարժաթև | 500 | 500 |
| 31 | Կարտերի միջադիր | 15 000 | 2 000 |
| 32 | Միջադիր | 4 000 | 1 000 |
| | 2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | |
| 33 | Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր | - | 2 500 |
| 34 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 4 000 | - |
| 35 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 6 000 | - |
| 36 | Յուղի զտիչ | 8 000 | 2 000 |
| 37 | Յուղի պոմպ | 1 000 | 1 000 |
| 38 | Յուղի պոմպի շարժաբեր | 500 | 500 |
| 39 | Յուղի ռադիատոր | 500 | - |
| 40 | Յուղի փողրակ | 500 | 100 |
| 41 | Յուղի ծորակ | 500 | 100 |
| 42 | Վառոցքի մոմ | 9 000 | 1 000 |
| 43 | Բենզոբաք | 1 000 | 1 000 |
| 44 | Խառնարակ | 100 | 25 000 |
| 45 | Խառնարակի վերանորոգման հավաքածու | 100 | 4 000 |
| 46 | Ինժեկտորի ֆորսունկա | 15 000 | - |
| 47 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 65 000 | - |
| 48 | Վառելանյութի մղիչ մեխանիկական | - | 6 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 49 | Վառելանյութի զտիչ | 15 000 | 3 000 |
| 50 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման | 500 | 500 |
| 51 | Վառելանյութի փողրակ | 2 000 | 2 000 |
| 52 | Աքսելերատորի ճոպան | 2 000 | - |
| 53 | Օդի զտիչ | 10 000 | 4 000 |
| 54 | Ջերմաստիճանային տվիչ | 2 000 | 100 |
| 55 | Յուղի տվիչ | 2 000 | 2 000 |
| 56 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 1 000 | - |
| 57 | Օդի ծախսի տվիչ | 40 000 | 20 000 |
| 58 | Արագաչափի տվիչ | 10 000 | 6 000 |
| 59 | Հովհարի տվիչ | 1 000 | 500 |
| 60 | Ջրի տվիչ | 500 | 500 |
| 61 | Բենզոբաքի տվիչ | 1 000 | 500 |
| 62 | Մարման ընթացքի կարգավորիչ | 1 000 | 100 |
| 63 | Մարման ընթացքի տվիչ | 500 | 100 |
| 64 | Ղեկավարման համակարգիչ | 500 | - |
| 65 | Պարապ ընթացքի տվիչ | 500 | 6 000 |
| 66 | Դրոսելային փականի տվիչ | 500 | - |
| 67 | Թթվածնի տվիչ | 500 | - |
| | 3. Սառեցման և արտածման համակարգ | | |
| 68 | Հովհարի փոկ | 500 | 100 |
| 69 | Հովհար | 5 000 | 2 000 |
| 70 | Ռադիատոր | 85 000 | 20 000 |
| 71 | Ընդարձակող բաք | 30 000 | 3 000 |
| 72 | Ռադիատորի փողրակ | 14 000 | 2 000 |
| 73 | Թերմոստատ | 12 000 | 5 000 |
| 74 | Ջրի պոմպ | 50 000 | 7 000 |
| 75 | Ջրի պոմպի առանցքակալ | 500 | 1 000 |
| 76 | Ջրի պոմպի թևակ | 500 | 1 000 |
| 77 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 2 000 | 2 000 |
| 78 | Ջրի պոմպի սռնանիվ | 500 | 500 |
| 79 | Հոլովակ | 1 000 | 100 |
| 80 | Փոկ | 10 000 | 2 000 |
| 81 | Փոկ կոնդիցիոների | 500 | - |
| 82 | Ծորակ | 500 | 500 |
| 83 | Խլարարի ներդիր | 4 000 | 500 |
| 84 | Խլարարի կախոց | 500 | 500 |
| 85 | Կրոնշտեյն | 500 | 500 |
| 86 | Անուր (խամուտ) | 1 000 | 500 |

| | | | |
|---|---|---|---|
| 87 | Խլարար | 45 000 | 15 000 |
| 88 | Ռեգոնատոր | 500 | 500 |
| 89 | Վառարանի ռադիատոր | 70 000 | 15 000 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | |
| 90 | Կցորդման բանվորական գլան | - | 6 000 |
| 91 | Կցորդման գլխավոր գլան | - | 8 000 |
| 92 | Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու | - | 1 000 |
| 93 | Կցորդման տանող սկավառակ | - | 25 000 |
| 94 | Կցորդման տարվող սկավառակ | - | 12 000 |
| 95 | Կցորդման առանցքակալ | - | 5 000 |
| 96 | Կցորդման փողրակ | 100 | 3 000 |
| 97 | Փոխանցման տուփ | 100 | 5 000 |
| 98 | ՓՏ-ի առջևի խցուկ | 100 | 2 000 |
| 99 | ՓՏ-ի հետևի խցուկ | 100 | 2 000 |
| 100 | ՓՏ-ի առանցքակալ | 100 | 6 000 |
| 101 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | - | 100 |
| 102 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռ | - | 8 000 |
| 103 | ՓՏ-ի եղանիկ | - | 1 000 |
| 104 | ՓՏ-ի ատամնանիվ | - | 6 000 |
| 105 | Համաժամիչ | - | 4 000 |
| 106 | Մուֆտ | - | 12 000 |
| 107 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | - | 1 000 |
| 108 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | 5 000 | 5 000 |
| 109 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | - | 15 000 |
| 110 | Հերմետիկ | 2 000 | 2 000 |
| | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | |
| 111 | Բաշխիչ տուփ | - | 100 |
| 112 | Բաշխիչ տուփի խցուկ | - | 100 |
| 113 | Բաշխիչ տուփի առանցքակալ | - | 100 |
| 114 | Բաշխիչ տուփի ատամնանիվ | - | 100 |
| 115 | Բաշխիչ տուփի լիսեռ | - | 100 |
| 116 | Կարդանային լիսեռ | - | 28 000 |
| 117 | Էլաստիկ մուֆտ | - | 4 000 |
| 118 | Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ | - | 4 000 |
| 119 | Կարդանային լիսեռի խաչուկ | - | 5 000 |
| | **6. Առջևի և հետևի կամրջակներ** | | |
| 120 | Հետևի կամ առջևի կամրջակ | - | 1 000 |
| 121 | Ռեդուկտոր | - | 1 000 |
| 122 | Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ | - | 1 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 123 | Դիֆֆերենցիալ | - | 12 000 |
| 124 | Դիֆֆերենցիալի սատելլիտ | - | 5 000 |
| 125 | Տանող ատամնանիվի խցուկ | - | 1 000 |
| 126 | Տանող ատամնանիվի առանցքակալ | - | 4 000 |
| 127 | Դիֆֆերենցիալի առանցքակալ | - | 4 000 |
| 128 | Կիսասռնի | - | 22 000 |
| 129 | Կիսասռնու առանցքակալ | - | 4 000 |
| 130 | Կիսասռնու միջադիր | - | 800 |
| 131 | Կիսասռնու խցուկ | - | 1 000 |
| 132 | Կարգավորիչ տափողակ | - | 500 |
| | 7. Կախոց | | |
| 133 | Տրավերս | 1 000 | 1 000 |
| 134 | Կրոնշտեյն | 1 000 | 1 000 |
| 135 | Ձախ կամ աջ հոդակապ | 70 000 | - |
| 136 | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | 15 000 | - |
| 137 | Անվակունդ | 45 000 | 1 000 |
| 138 | Անվակունդի խցուկ | 3 000 | 500 |
| 139 | Անվակունդի ներքին առանցքակալ | 35 000 | 3 000 |
| 140 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 6 000 | 3 000 |
| 141 | Հետևի անվակունդի ներքին առանցքակալ | 500 | - |
| 142 | Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ | 500 | - |
| 143 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկ | 5 000 | 100 |
| 144 | Հարվածամեղմիչի թասակ | 25 000 | - |
| 145 | Զսպանակ | 500 | 500 |
| 146 | Առջևի հարվածամեղմիչ | 60 000 | 12 000 |
| 147 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | 1 000 | 500 |
| 148 | Հարվածամեղմիչի վռան | 1 000 | 800 |
| 149 | Ներքևի լծակ | 40 000 | 10 000 |
| 150 | Ներքևի լծակի վռան | 6 000 | 1 000 |
| 151 | Վերևի լծակ | 35 000 | 10 000 |
| 152 | Վերևի լծակի վռան | 6 000 | 1 000 |
| 153 | Գնդե հոդակապ | 19 000 | 7 000 |
| 154 | Առջևի կայունարար | 25 000 | 12 000 |
| 155 | Առջևի կայունարարի վռան | 8 000 | 1 000 |
| 156 | Առջևի կայունարարի առջևի վռան | 500 | 100 |
| 157 | Հետևի զսպանակ | 1 000 | 1 000 |
| 158 | Հետևի ցնցամեղմիչ | 45 000 | 12 000 |
| 159 | Հետևի մետաղաձող (շտանգա) | - | 3 000 |
| 160 | Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան | - | 500 |

| | | | |
|---|---|---|---|
| 161 | Հետևի անկյունագծային լծակ | - | 1 000 |
| 162 | Անկյունագծային լծակի վրան | - | 500 |
| 163 | Զսպակ (ռեսսորա) | - | - |
| 164 | Զսպակի վրան | - | - |
| 165 | Զսպակի միջադիր | - | - |
| 166 | Զսպակի բռնիչ | - | - |
| 167 | Աջ կամ ձախ ձգան | - | - |
| 168 | Ծայրակալ | - | - |
| 169 | Ձգան մեջտեղի | - | - |
| 170 | Անվահեծ | 1 000 | 1 000 |
| | 8. Ղեկային մեխանիզմ | | |
| 171 | Ղեկային կալուն | - | 1 000 |
| 172 | Ղեկային կալունի առանցքակալ | - | 3 000 |
| 173 | Ղեկային կալունի խաչուկ | - | 2 000 |
| 174 | Հիդրոուժեղարար | 1 000 | - |
| 175 | Հիդրոուժեղարարի փոկ | 8 000 | - |
| 176 | Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ | 20 000 | - |
| 177 | Հիդրոուժեղարարի պոմպ | 1 000 | - |
| 178 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 8 000 | - |
| 179 | Ղեկային ձող | - | 6 000 |
| 180 | Ղեկային ձողի ծայրակալ | - | 1 000 |
| 181 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | 5 000 | - |
| 182 | Ճոճանակ | 100 | 100 |
| 183 | Ճոճանակի վրան | 100 | 100 |
| | 9. Արգելակային համակարգ | | |
| 184 | Գլխ. գլան | 12 000 | 1 000 |
| 185 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 1 000 | 1 000 |
| 186 | Վակուումային ուժեղարար | 1 000 | 1 000 |
| 187 | Բանվ. գլան | 10 000 | 1 000 |
| 188 | Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 1 000 | 1 000 |
| 189 | Արգելակային փողրակ | 5 000 | 3 000 |
| 190 | Սուպպորտի ուղղորդիչ | 1 000 | 100 |
| 191 | Սուպպորտի մանժետ | 1 000 | 500 |
| 192 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 28 000 | 7 000 |
| 193 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | - | 7 000 |
| 194 | Առջևի արգելակային սկավառակ | 20 000 | 7 000 |
| 195 | Հետևի արգելակային սկավառակ | 20 000 | - |
| 196 | Ձեռքի արգելակի ճոպան | 12 000 | 5 000 |
| 197 | ABS-ի տվիչ | 15 000 | - |
| 19 | Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | | 000 | 000 |
| 199 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | 2 000 | 2 000 |
| 200 | Ձեռքի արգելակի ճոպան | 100 | 100 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | | |
| 201 | Գեներատոր | 95 000 | 30 000 |
| 202 | Գեներատորի դիոդային կամրջակ | 30 000 | 9 000 |
| 203 | Գեներատորի ռելե | 15 000 | 5 000 |
| 204 | Գեներատորի առանցքակալ | 10 000 | 2 000 |
| 205 | Ստարտեր | 80 000 | 28 000 |
| 206 | Ստարտերի ռելե | 5 000 | 2 000 |
| 207 | Ստարտերի ածուխ | 5 000 | 1 000 |
| 208 | Բենդեքս | 25 000 | 8 000 |
| 209 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 25 000 | 9 000 |
| 210 | Առջևի լապտեր | 1 000 | 1 000 |
| 211 | Առջևի թարթիչ | 500 | 500 |
| 212 | Հետևի լապտեր | 500 | 500 |
| 213 | Հետևի թարթիչ | 100 | 100 |
| 214 | Արգելակային լապտեր | 15 000 | 2 000 |
| 215 | Լամպ | 8 000 | 3 000 |
| 216 | Էլեկտրական անջատիչ | 1 000 | 500 |
| 217 | Էլեկտրական տվիչ | 1 000 | 500 |
| 218 | Էլեկտրական չափիչ սարք | 500 | - |
| 219 | Բռնկման կոճղակ | 13 000 | 5 000 |
| 220 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | 1 000 | 1 000 |
| 221 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | 1 000 | 1 000 |
| 222 | Վառոցքային լարերի խուրց | 25 000 | 5 000 |
| 223 | Վառոցքի մոմի ծայրակալ | 8 000 | 1 000 |
| 224 | Վազքաչափ | 500 | 100 |
| 225 | Վազքաչափի ճոպան | 100 | 100 |
| 226 | Արագաչափ | 9 300 | 4 650 |
| 227 | Ազդանշան | 3 000 | 3 000 |
| 228 | Ապակելվացիչ | 3 000 | 2 000 |
| 229 | Ապակելվացիչի շարժիչ | 15 000 | 5 000 |
| 230 | Դռների կենտրոնական փական | 15 000 | - |
| 231 | Ազդանշանային համակարգ | 10 000 | 5 000 |
| 232 | Մագնիտոլա | 500 | 1 000 |
| 233 | Էլեկտրաամբարձիչ | 15 000 | - |
| 234 | Էլեկտրաամբարձիչի շարժիչ | 15 000 | - |
| 235 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *գին 1դ/մ վերանորոգման համար* | 4 000 | 3 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 236 | Դիմապակի | 50 000 | 20 000 |
| 237 | Կողային ապակիներ | 25 000 | 15 000 |
| 238 | Հետևի ապակի | 40 000 | 40 000 |
| | Ընդամենը պահեստամասեր, քսայուղեր, և այլ օժանդակ նյութեր | 2 234 000 | 820 000 |
| | Ամբողջը | 3 076 000 | 1 179 000 |

Ծառայության մատուցման ժամկետը

| Սկիզբը | ավարտը |
|---|---|
| Պայմանագիր կնքելու պահից | 30.12.2017թ. |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՎՀՀ 03001885
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900122002141
Համայնքի ղեկավար
Ա.Հարությունյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Մ-Բի-Ռ>>ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Մյասնիկյան 22/4
<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08417829
ՀՀ 220083335012000
Տնօրեն Վ.Բաղդասարյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 2*
*<<30>>մարտի 2017թ. Կնքված*
*N ԾՔ-ՇՀԾՁԲ-15/3-17/2-1 ծածկագրով գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա մենը Տարի |
| 1. | Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների կապիտալ վերանորոգման՝ տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում | ... % | ... % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ծաղկաձորի համայնքապետարան
Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՎՀՀ 03001885
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900122002141
Համայնքի ղեկավար
Ա.Հարությունյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Մ-Բի-Ռ>>ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Մյասնիկյան 22/4
<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08417829
ՀՀ 220083335012000
Տնօրեն Վ.Բաղդասարյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.